ԺԱՆ ԲԱԼԱՐ

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻՆ ԱՌԹԻՎ

Եվ ուզեր հոդվածի մը հանգամանքը տալ այս քանի մը տողերուն: Ի՞նչ համարձակությամբ պիտի կարենայի այդպիսի հավակնություն մը ունենալ: Հոգիով թեև այլևս կապված հայ ժողովուրդին, բայց կդառնամ բոբիկ, երբ ոտք դնեմ անոր հրաշալի դպրության անդաստանին մեջ: Սերն ու հիացումը չեն կրնար միշտ փոխարինել գիտությունը:

Լսած էի իմարկե, Ս. Մեսրոպ վարդապետի անունը, Նարեկացիի թարգմանիչն: Գիտեր թե ո՛վ էր ան և ի՞նչ էր ըրած:

Շատ հստակ է այլևս ինձի համար հինգերորդ դարու հայկական այս հրաշքը: Չեմ գիտեր, թե այսօրվան բոլոր հայերը կըմբռնե՞ն անոր իրական արժեքն ու մեծությունը:

Լավ է, որ հրաշք մը երբեմն դիտվի նաև դուրսեն, օտարի աչքերով:

Հայությունը ամեն տարի կտոնե հիշատակը իր վավակներեն երկու ամենեն պանծալիներուն՝ Ս. Մեսրոպի և Ս. Սահակի:

Բայց ո՞վ են անոնք. պատերազմիկնե՞ր, ծովակալնե՞ր, մեծ օրենսդիրնե՞ր... տարածա՞ծ են անոնք հայկական գերիշխանությունը հեռավոր երկիրներու և անծանոթ ծովերու վրա... արդյոք երգած են իրենց ժողովուրդին փառքե՞ր, կերտած անոր օրենքնե՞ր, կայն սփոփա՞ծ, կայն մխիթարա՞ծ...

Ավելի՛ն ըրած են անոնք և ավելի գեղեցիկը. փրկած են հայ միտքը անիշխանութենե ու մոռացումե: Իրենց ժողովուրդին տված են ԳԻՐԸ, իր հավերժությունը դարբնող կենքը: Ան կփոխարինե բառերու «ասեղնագործություն»-ը, մտածված, կշռված երկաթագիր վկայությամբ մը, մնայուն և անհերքելի, որ գրված մտածումն է:

Այսպիսով անոնք կփրկեին հայկական ոգին օտար ազդեցություններե, օտար դյութանքներե, կապատեին վայն անգիր դպրության մը տիրապետութենեն, գավառաբարբառներու խառնիճաղանճեն, ուր այդ ոգին ի վերջո պիտի կորսվեր, իբրև խեղճ միջակություն մը:

Այս հանճարեղ գյուտարարները թույլ տվին, որ հայկական խղճմտանքը ձևակերպե իր օրենքները, ամրապնդե իր ավանդությունները, բառերուն վրահին մեջ պարփակե թափառիկ, խուսափուկ ու միշտ անկայուն մտածումը:

Առաջին ակնարկով մեկի այնպես կթվի, թե տղայական խաղ է այբուբենի գյուտը:

Բայց մտածումին ուժգնությունը, անոր գոյությունն իսկ, կախում ունին տառերու ձևեն, անոնց միացման եղանակեն, ա՛յն կարգ ու սարքեն, որուն կենթարկվին բառերը:

Լեզուն ենթարկելով գրության օրենքներուն, քերականության, համաձայնության, շարադասության կանոններուն, հայության ամենեն պանծալի այս երկու վավակները՝ Ս. Մեսրոպ և Ս. Սահակ ապահովեցին հավերժությունը հայ հանճարին, ճառագայթումը հայկական մշակույթին՝ մինչև մեր օրերը:

Անգնահատելի գանձ, անգին բարիք, կորս ո՛չ մեկ թագավոր, ո՛չ մեկ զորավար, ո՛չ մեկ հերոս կամ սուրբ կրնան իբրև ընծա տալ իրենց ժողովուրդին: